

ի րազմանալ խռովութեանց՝ ի թագաւորեալ քաղաքի տնդ՝ եւ հրաման յինքնակալէն լինել ժողով Նախկոպոսաց, եւ ժողովեցան 200 Նախկոպոսունք ի քաղաքն Եփեսոսի (431) :

Կիւրեղ Աղէքսանդրեայ, Յորնաղ Երուսաղէմի, Յովհան Անտիոքայ եւ այլք՝ եկին եւ երեք փոխանորդք Կեղեստինեայ հայրապետին հռոմայ : Յետ բազմադիմի խռովութեանց եւ նենգութեանցն եղելոց, հռոմի ուրեմն ընկալաւ Նեստոր զվճիռ նշովից եւ հատեալ ի բաց ընկեցաւ ի հաղորդութենէ եկեղեցւոյ, եւ Հարք ժողովոյն դաւանեցին մի Որդի զՏէրն մեր Յիսուս Քրիստոս եւ Աստուածածին զամենասուրբ Կոյսն Մարիամ : Տե՛ս ի գէշ Պատմութեան Տէկեղեցւոյն Ժողովոյ : Եւ զի Մեծն Սահակ եւ Մեսրոպալ ոչ կարացին հանդիպիլ ժողովոյս, գրով ընկալան զսահմանս եւ զկանոնս նորին ի ձեռս թարգմանչաց մերոց : Եւ Հարք ժողովոյն հրամանաւ Թէոդոսի արձակեալ գնացին յիւրաքանչիւր քաղաք եւ յեկեղեցի իւր : Իսկ Նեստոր տարադիր եղեւ յովոսիս յանապատն Եգիպտոսի, ուր որդեալից լեալ սատակի (440) :

Եւտիքէս վանահայր միոյ յերեւելի մենաստանացն Կոստանդինուպօլեայ՝ հան յերեւան զկարծիս մուրրութեան իւրոյ : Փլաքիանոս հայրապետ քաղաքին՝ ժողովով 55 Նախկոպոսաց յետ երիցս խրատելոյ՝ իրեւ եգիպտ հաստատուն ի կարծիս մուրրութեան իւրոյ, դատապարտեաց զնա նշովիւք եւ ի բաց կտրեաց ի հաղորդութենէ Եկեղեցւոյ (448) : Եկեղեցին Հայոց եւս նշովէ զԵւտիքէս, որոյ մուրրամիտ վարդապետութեան բաւական լիցին յանդիմանական բանք Ներսիսի Շնորհալոյ :

Որպէս ասաց ժանդն Եւտիքէս

Թէ ոչ մարմին առ իսկապէս,

Այլ առ աչօք անց ընդ Կուսին՝

Խողովակի նմանապէս :

Կամ կաղապար հրահալելեաց՝

Որ զբնութիւն ոչ տայ ինքեանց,

Միայն զձեռս քանդակեալ

Եւ զքանակս ենթակայեալ :